ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՇԻՐԻՆՅԱՆ ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼՅՈՇԱՅԻ

Պատմական ժամանակի ընկալումը հայ եկեղեցական մատենագրության մեջ (V – XVդդ) (Կրոնագիտական վերլուծություն)

Թ. 00.05 – “Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)”
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ — 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում

Գիտական ղեկավար՝ **փիլիսոփայական գիտությունների դոկտոր Քյոսեյան Հակոբ Հովհաննեսի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Ա. Զաքարյան

պատմական գիտությունների թեկնածու Ն. Զ.Միրզոյան

Առաջատար կազմակերպություն՝ **Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 10 Հուլիս 2026թ. Ժ.12:00-ին Երևանի Պետական Համալսարանում գործող՝ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Կրոնագիտության 068 մասնագիտության խորհրդի նիստում (հասցե՝ 0025, ք.Երևան, Աբովյան փ. 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենք):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունիսի 8– ին:

Մասնագիտական խորհուրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արշակ Յուրիի Բալյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է V - XV դարերի հայ եկեղեցական մատենագրության մեջ ժամանակի՝ որպես քրիստոնեական գրավոր մշակույթի տիրույթում ձևավորված փիլիսոփայական-աստվածաբանական կարգույթի ընկալման հետազոտությանը: Աշխատանքում ժամանակը դիտարկվում է ոչ թե որպես չեզոք ժամանակագրական կարգույթ, այլ որպես իմաստային կառուցվածք, որի միջոցով իմաստավորվում են պատմությունը, հիշողությունը, հայտնությունը և մարդկային կեցությունն Աստծո առջև:

Ուսումնասիրության կենտրոնում V - XV դարերի հայ եկեղեցական բնագրերն են, այդ թվում՝ պատմագրական, մեկնողական, ծիսական և աստվածաբանական երկերը, որոնցում ժամանակը հանդես է գալիս որպես աստվածայինի և մարդկայինի հանդիպման տիրույթ, որպես ուխտի, կործանման ու հույսի վերապրումի ձև: Վերլուծվում է, թե ինչպես են այդ բնագրերում հարաբերվում անցյալը, ներկան ու ապագան, և թե ինչպես է պատմական իրադարձությունը ձեռք բերում սրբազան բովանդակություն:

Առանձնակի ուշադրություն է դարձվում այն մտավոր համատեքստին, որի շրջանակներում ձևավորվել են ժամանակի մասին հայկական պատկերացումները: Ատենախոսության մեջ հետագծվում է հայ եկեղեցական ավանդության երկխոսությունը անտիկ փիլիսոփայության (նախևառաջ պլատոնականության և արիստոտելականության), ժամանակի հրեական ընկալման՝ որպես ուխտի հիշողության ու իրագործման սպասման, ինչպես նաև՝ պատմության և վախճանաբանության հայրաբանական ըմբռնումների հետ: Ցույց է տրվում, որ հայ եկեղեցական մատենագրությունը մեխանիկորեն չի փոխառում այդ մոդելները, այլ վերամշակում է դրանք՝ ձևավորելով ժամանակի ինքնատիպ քրիստոնեական ընկալում:

Աշխատանքում բացահայտվում է հայկական աղբյուրներում ներկայացված ժամանակային փորձառության բազմաշերտ բնույթը. ժամանակն

ըմբռնվում է որպես պատմական վկայություն, որպես ծիսական ներկայություն և որպես վախճանաբանական լարում: Այս չափումները չեն հակադրվում միմյանց, այլ համագոյակցում են՝ կազմելով եկեղեցական գիտակցության ամբողջական կառուցվածքը, որտեղ անցյալի հիշողությունը և ապագայի սպասումը պայմանավորում են ներկայի իմաստը:

Ատենախոսությունը փաստում է, որ հայ եկեղեցական մատենագրության մեջ ժամանակի ընկալումը շաղկապված է պատմության՝ որպես պատասխանատվության և հոգևոր փորձառության տիրույթի իմաստավորման հետ, այլ ոչ թե որպես գծային առաջընթացի: Այս համատեքստում ժամանակը հանդես է գալիս ոչ միայն որպես պատմական պատումի կարգ, այլև որպես աստվածաբանական մտածողության ձև, որի միջոցով արտահայտվում է աշխարհի, մարդու և պատմության մեջ աստվածային ներգործության ընկալումը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը և կարևորությունը: Ժամանակի ընկալման հիմնախնդիրն առանցքային տեղ է զբաղեցնում արդի փիլիսոփայության, աստվածաբանության և, ընդհանրապես, հասարակական գիտելիքի համակարգում: Պատմական գծային մոդելների ճգնաժամի և պատմական գիտակցության հիմքերի վերաիմաստավորման պայմաններում մեծանում է հետաքրքրությունը ժամանակի ընկալման նախաարդիական (նախամոդեռն) ձևերի նկատմամբ, որոնցում պատմությունը, հիշողությունը և ապագայի սպասումը կազմում են միասնական իմաստային ներդաշն կառույց: Միջնադարյան քրիստոնեական ավանդույթները պահպանում են ժամանակայնության (տեմպորալության) այլընտրանքային մոդելներ, որոնք ունակ են ընդլայնելու ժամանակի՝ որպես մարդկային փորձառության կարգի վերաբերյալ արդի պատկերացումները:

V - XV -րդ դարերի հայ եկեղեցական մատենագրությունն իրենից ներկայացնում է բնագրերի եզակի համակարգ, որը ձևավորվել է մշտական պատմական խզումների, քաղաքական աղետների և մշակութային

հաջորդականության պայմաններում: Այս համատեքստում ժամանակի հիմնախնդիրը ձեռք է բերում ոչ թե վերացական-տեսական, այլ էկզիստենցիալ և աստվածաբանական բնույթ, ինչը հայկական ավանդությունը դարձնում է առանձնահատուկ ուշագրավ՝ պատմության սրբացման մեխանիզմների, հավաքական հիշողության և վախճանաբանական սպասումների հետազոտության նյութ: Չնայած հայ պատմագրության և աստվածաբանության հանդեպ ունեցած զգալի հետաքրքրությանը՝ նշյալ աղբյուրներում ժամանակի ընկալման հիմնախնդիրը մինչ օրս չի արժանացել համակարգված փիլիսոփայական-աստվածաբանական իմաստավորման:

Սյուն ատենախոսության ***նպատակն է*** հետագծել ժամանակի փիլիսոփայա-աստվածաբանական ըմբռնման պատմությունը, դրա գոյաբանական և արժեբանականկարգավիճակը անտիկ ժամանակներից մինչև հայկական միջնադար, ինչպես նաև՝բացահայտել ընտրված փիլիսոփայական և կրոնական երկերի հարաբերակցությունը և կապը: Մշակել և փորձարկել մեթոդաբանական մոտեցում, որը հիմնված է դասական հերմենևտիկայի (Պ. Ռիկյոր, Հ. - Գ. Գադամեր և Ջ. Ագամբենի)[1] և տեքստերի փիլիսոփայական ու աստվածաբանական վերլուծության ինտեգրման վրա: Այդ նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

. անցկացնել ժամանակի փիլիսոփայական ընկալման վերաբերյալ գիտական գրականության վերանայում:

---

[1] **П. Рикёр**, Время и рассказ, Интрига и исторический рассказ, пер. с фр. В. Г. Кузнецова, т. 1, Москва, Санкт-Петербург, Университетская книга, 2000, 313 с. **П. Рикёр**, Конфигурация в вымышленном рассказе, пер. с фр. Т. В. Славко, т. 2, Москва, Санкт-Петербург, Университетская книга, 2000, 224 с. **П. Рикёр**, Память, история, забвение, пер. с фр. И. И. Блауберг [и др.], Москва, Издательство гуманитарной литературы, 2004, 728 с. **Г.-Г. Гадамер**, Истина и метод: Основы филос. Герменевтики, пер. с нем. общ. ред. и вступ. ст. Б. Н. Бессонова, Москва, Прогресс, 1988, 704 с. **Д. Агамбен,** Оставшееся время: Комментарий к Посланию к Римлянам, пер. с ит. С. Ермакова, Москва, 2018, [Электронный ресурс] URL: https://predanie.ru/book/219985-ostavsheesya-vremya-kommentariy-k-poslaniyu-k-rimlyanam/#/toc1 (дата обращения: 18.03.2026).

• հիմնվելով ընտրված մտածողների երկերի վերլուծության և համեմատության վրա՝զուգահեռներ տանել ժամանակի հայեցակարգերի փոխհարաբերությունը անտիկ դարաշրջանի, հուդայականության, մի շարք հայրախոսական և հայ միջնադարի՝ նշված ժամանակահատվածի մտածողների՝ այս գաղափարի հետ կապված պատմական ժամանակի հատուկ ըմբռնման միջև,

• ներկայացնել փիլիսոփայական ընդհանրությունը, ինչպես նաև բացահայտել թաքնված, բայց կոնկրետ փիլիսոփայական կապերը մշակութային և ժամանակագրական առումով իրարից հեռու բնագրերի միջև և դրանով իսկ հիմնավորել այս հետազոտությունը:

• Ներկայացնել հայ փիլիսոփայական և աստվածաբանական տեքստերում ժամանակի հիմնական կարգույթները (գծային, փուլային, վաղճանաբանական և այլն):

• Հիմնավորել հայկական բնագրերի մեկնաբանման համար ժամանակի մասին հերմենևտիկ մոտեցման կարևորությունը և համակարգել ստացված արդյունքները:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ այստեղ իր նախադեպը չունեցող վերլուծություն է կատարվում հայ միջնադարյան
փիլիսոփայության և աստվածաբանության պատմական ժամանակի ընկալման խնդիրների համատեքստում՝

1. Հայագիտության մեջ առաջին անգամ V - XV -րդ դարերի հայ եկեղեցական մատենագրությունը ենթարկվել է ամբողջական փիլիսոփայական-աստվածաբանական վերլուծության՝ որպես ժամանակի իմաստավորման ինքնուրույն ավանդույթ, որն օժտված է ներքին հայեցակարգային միասնականությամբ և ինքնատիպությամբ:

2. Առաջին անգամ համակարգված կերպով վերակազմվել է պատմական ժամանակի ընկալման հիմնախնդիրը հայ միջնադարյան փիլիսոփայության և աստվածաբանության մեջ՝ պատմագրական, մեկնողական ու ծիսական

աղբյուրների համալիր վերլուծության հիման վրա, ինչը թույլ է տվել վերհանել գիտական գրականության մեջ նախկինում չնկարագրված կայուն ժամանակային (տեմպորալ) մոդելներ:

3. Առաջին անգամ փաստարկված կերպով ցույց է տրվել, որ հայ աստվածաբանական-փիլիսոփայական միտքը ձևավորում է քրիստոնեական ժամանակաընկալման ինքնատիպ մոդել, որն առաջանում է անտիկ փիլիսոփայության, հրեական ժամանակային ավանդույթի և հայրաբանական աստվածաբանության ստեղծագործական համադրման, այլ ոչ թե պատրաստի հայեցակարգերի պարզ փոխառության արդյունքում:

4. Մշակվել, տեսականորեն հիմնավորվել և փորձարկվել է հայ աստվածաբանական-փիլիսոփայական ավանդույթում ժամանակի ընկալման հետազոտության ինքնատիպ հերմենևտիկական մոտեցում, որը թույլ է տալիս ժամանակը դիտարկել որպես եկեղեցական մտածողության և պատմական ինքնագիտակցության կառուցվածքաստեղծ կարգույթ:

5. Առաջին անգամ հիմնավորվել է, որ V - XV -րդ դարերի հայ եկեղեցական ավանդության մեջ ժամանակի ընկալումը գործում է որպես համակցող կարգ, որը միավորում է աստվածաբանական, փիլիսոփայական և պատմական չափումները: Սա հնարավորություն է ընձեռում նորովի սահմանել հայկական ավանդության տեղը ժամանակի քրիստոնեական փիլիսոփայության պատմության մեջ:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները և հեռանկարները:

Ատենախոսական հետազոտության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են V դարից մինչև XV դարն ընկած ժամանակահատվածը: Ստորին սահմանը պայմանավորված է հայ քրիստոնեական գրավոր ավանդույթի ձևավորման սկզբնավորմամբ, ինչը շաղկապված է հայոց գրերի գյուտի և լայնածավալ թարգմանական շարժման հետ, որի արդյունքում թարգմանվեցին աստվածաշնչյան, հայրաբանական և փիլիսոփայական առանցքային բնագրեր:

Հենց այս շրջանում են դրվում հայ եկեղեցական մշակույթի մեջ ժամանակի ընկալման հիմնական աստվածաբանական և փիլիսոփայական հիմքերը:

Հետազոտության վերին ժամանակագրական սահմանը սահմանափակվում է XV դարով, ինչը թելադրված է վերլուծվող աղբյուրների համակարգը հստակեցնելու և հայ աստվածաբանական-փիլիսոփայական ավանդույթի ձևավորման ու զարգացման առանցքային փուլերի վրա կենտրոնանալու անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ մենք գիտակցում ենք, որ հաջորդող ժամանակաշրջանները զգալի հետաքրքրություն են ներկայացնում հայ եկեղեցական մտքի ընկալման հետագա ուսումնասիրության համար:

Հետագա հետազոտությունների հեռանկարները կապված են ուշ միջնադարյան և վաղարդիական հայկական բնագրերի առավել մանրակրկիտ վերլուծության, ինչպես նաև համեմատական համատեքստի ընդլայնման հետ: Սա թույլ կտա խորացնել ու հստակեցնել ատենախոսության մեջ վերհանված ժամանակընկալման մոդելները և հետագծել դրանց կերպափոխումները հետագա պատմամշակութային պայմաններում:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն: Ատենախոսական հետազոտությունը հիմնվում է սկզբնաղբյուրների և գիտական գրականության համալիրի վրա, որն ապահովում է քրիստոնեական ավանդույթում ժամանակի ընկալման մոդելների բազմակողմանի քննությունը՝ շեշտադրելով հայ մտավոր մշակույթը: Աղբյուրների և գրականության ներգրավումն ունի հիմնավորված և համակարգային բնույթ. նյութերի յուրաքանչյուր խումբ կիրառվում է հետազոտության մեջ իր ունեցած գործառույթին համապատասխան:

Անտիկ փիլիսոփայական գրականությունը ծառայում է որպես վաղքրիստոնեական ժամանակի հիմնախնդրի ձևավորման համատեքստային հենք: Ատենախոսության մեջ հաշվի են առնվում պլատոնյան[2] և արիստոտելյան[3]

---

[2] **Платон,** Тимей (Перевод С САверинцева), Платон, Собрание сочинений в 4 т, 3, Москва, 1994, 500 с.

փիլիսոփայությանը նվիրված աշխատությունները, ինչպես նաև ուշ անտիկ մտածողների (օրինակ՝ Պլոտին[4], Փիլոն Ալեքսանդրացի[5]) երկերը: Սույն նյութերը կիրառվում են բացառապես այն մտավոր հորիզոնի բնութագրման համար, որի շրջանակներում ձևավորվել է ժամանակի մասին քրիստոնեական միտքը, և այն հայեցակարգային կարգերի ըմբռնման նպատակով, որոնք յուրացվել ու փոխակերպվել են հայրաբանական և հայկական ավանդույթներում

Աստվածաշնչյան-հրեական գրականությունը ներգրավվում է ժամանակի մասին այն նախնական պատկերացումների վերհանման համար, որոնց վրա խարսխված է պատմության և սրբազան ժամանակի քրիստոնեական հայեցակարգը: Հիմքը կազմում են Թանախի տեքստերը (Ծննդոց, Ելք, Սաղմոսներ, Մարգարեներ) և առանցքային ռաբբիական աղբյուրները: Հուդայականության ժամանակակից մասնագետների աշխատությունները, ինչպիսիք են Դ. Բոյարինի[6], Ա. Խեշշելի[7], Ա. Կովելմանի ու Ու. Գերշովիչի[8] հետազոտությունները, օգտագործվում են հին եբրայերեն ժամանակային հասկացությունների (‘ēt, zĕmān, ‘ōlām) իմաստաբանության և քրիստոնեական

Платон. Государство. Миф об Эре, т. 2. **Платон**, Собрание сочинений в 4 т, Москва, Наука, 1979, 400 с. **Платон,** Федон, Сочинения в 4-х томах. т. 2. Москва, Мысль, 1971, 529 с.

[3] **Аристотель,** Метафизика, Перевод с древнегреческого, вступительная и комментарии А В Маркова, Москва,“РИПОЛ”, 2018, 384 с. **Аристотель,** Физика. Книга IV, глава 11. Аристотель. Сочинения: в 4 т, т. 3, пер. с древнегреч. под ред. В. Ф. Асмуса, Москва, Мысль, 1981, 308 с. **Аристотель**, Сочинения в четырех томах, Т 3, Физика, АН СССР, Изд. Мысль, Москва, 1981, 380 с. **Аристотель**, О небе, соб. соч. Аристотеля в четырех томах, т. 3, Москва, Мысль, 1981, 308 с.

[4] **Плотин,** Эннеады, III 7 (13), УЦИММ- ПРЕСС, Киев, 2003, 386 с. **Плотин**, Вторая Эннеада, пер. с древнегреческого и вступительная статья Т.Г.Сидаша, Изд. О.Абышко, Санкт- Петербург, 2004, 386 с.

[5] **Филон Александрийский**, «Толкование Вехого Завета», Греко – латинский кабинет, Москва, 2000, 457 с.

[6] **Т. Гарсии-Уидобро, S. J. и А. А. Орлова Edited by T. Garcia-Huidobro S. J. andA. A. Orlov**, Иудейские корни христианской мистики, Jewish roots of christian mysticism, Санк-Петербург, 2021, 432 с.

[7] **Heshel A.J**. The Shabbath, Printed in USA, published in 1951 by Farrar Straus and Giroux, 34 pp.

[8] **А. Ковельман, У. Гершович**, Единицы времени в трактате Брахот, Число - счет - нумерология в славянской и еврейской культурной традиции, Сборник статей, Институт славяноведения РАН, Москва, 2015, с. 8

ժամանակի մոդելի ձևավորման գործում դրանց նշանակության պարզաբանման համար: Այս աղբյուրների կիրառումն ունի սահմանափակ և նպատակաուղղված բնույթ՝ թելադրված բացառապես քրիստոնեական և հայկական բնագրերի վերլուծությանը նպաստող անհրաժեշտ ընդգրկումով:

Հայրաբանական գրականությունը օգտագործվում է ժամանակի աստվածաբանական մեկնաբանությունների, ինչպես նաև պատմության և վախճանաբանության քրիստոնեական ընկալման վրա դրանց ունեցած ազդեցության վերլուծության համար: Աշխատանքում ներգրավված են Օգոստինոս Երանելու[9], Գրիգոր Նյուսացու[10], Բարսեղ Կեսարացու[11] երկերը, ինչպես նաև հայրաբանությանն առնչվող ժամանակակից հետազոտություններ (օրինակ՝ Յ. Պելիկան[12], Վ. Պետրով[13] Գ. Ֆլորովսկի[14]), որոնք թույլ են տալիս հետագծել քրիստոնեական ավանդույթում անտիկ և աստվածաշնչյան պատկերացումների հարմարեցման (ադապտացիայի) մեխանիզմները: Հայրաբանական գրականությունը ատենախոսության մեջ դիտարկվում է որպես հայերեն բնագրերի մեկնաբանության և ժամանակային կարգերի տրանսֆորմացիայի վերլուծության միջոց:

Հայկական սկզբնաղբյուրները կազմում են հետազոտության հիմնական առանցքը: Դրանց թվում են V դարի պատմագրական երկը՝ Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց »[15] , ինչպես նաև՝ Եզնիկ Կողբացու[16] և

---

[9] **Блаженный Августин,** Исповедь, пер. М. Е.Сергеенко, Санкт-Петербург, Наука, 2013, 442 с.

[10] **Григорий Нисский.** Богословские произведения, пер. с греч, введ. и примеч. В.В. Кузнецова, Москва, Изд-во Московской Патриархии, 1990, 320 с.

[11] **Василий Великий.** Беседы на Шестоднев («Hexaemeron»), Москва, Издание Московской духовной академии, 1911–1912, 379 с.

[12] **Я.Пеликан**, Христианская традиция, История развития вероучений, т. 1, Москва, 2007, 377 с.

[13] **В. Петров**, Максим Исповедник: Онтология и метод в византийской философии VII века, РАН, Москва, 2007, 201с.

[14] **Г. Флоровский**, Восточные отцы. Добавление, Москва, Изд. Свято –Владимирского братства, 1998, 95 с.

[15] **Մովսես Խորենացի**, Պատմութիւն հայոց մեծայ, Մատենագիրք հայոց, հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1743:

Անանիա Շիրակացու[17] աստվածաբանական-փիլիսոփայական երկերը, Խոսրով Անձևացու[18] ծիսական ու մեկնողական ստեղծագործությունները: Հայկական աղբյուրների վերլուծությունն իրականացվում է՝ հաշվի առնելով ժանրային յուրահատկությունը, գրավոր մշակույթի առանձնահատկությունները և պատմամշակութային համատեքստը: Մեկնաբանության ընթացքում հաշվառվում է անտիկ փիլիսոփայության, աստվածաշնչյան բնագրերի և հայրաբանական ավանդույթի ազդեցությունը, որոնք հայ մշակույթի մեջ ներհյուսվել են թարգմանությունների և մեկնողական պրակտիկայի միջոցով: Հայագիտական գրականությունը (Հ. Քյոսեյան[19], Ս. Արեվշատյան[20], Գ. Վինկլեր[21]) կիրառվում է աղբյուրների ձևավորման պատմական և բնագրագիտական պայմանների հստակեցման, ինչպես նաև հայկական ավանդույթը քրիստոնեական ընդհանուր մտավոր համատեքստի հետ հարաբերակցելու համար:

Ընդհանուր առմամբ, գրականությունը և աղբյուրները ատենախոսության մեջ իրականացնում են հետևյալ գործառույթները.

1. Համատեքստային — հայերեն բնագրերի վերլուծության համար մտավոր, փիլիսոփայական և պատմամշակութային շրջանակի ստեղծում,
2. Հստակեցնող — իմաստաբանության և հասկացութային ապարատի ստուգում, ազդեցությունների և փոխակերպումների վերհանում,

---

[16] **Հ. Քյոսեյան,** Ներածություն Հայ եկեղեցական մատենագրության. Երևան, Հեղինակային հր, 2021, 729 էջ:

[17] **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, թարգմանություն Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, Սովետական գրող, հր,1979, 353 էջ:

[18] **Խոսրով Անձևացի**, Սուրբ պատարագի մեկնություն, Գրաբարից թարգմանությունը՝ Գևորգ աբդ. Սարոյանի և Մկրտիչ աբդ. Պոռշյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, 115 էջ:

[19] **Հ. Քյոսեյան**, Խորհուրդապաշտական աստվածաբանություն, Երևան, 2023, 298 էջ:

[20] **Ս. Արեվշատյան,** Հայ միջնադարյան փիլիսոփայություն, Մաս Ա, Հին շրջան և վաղ շրջան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հր, 2014, 538 էջ:

[21] **Г. Винклер,** Христология Василия Великого в различных редакциях, пер. на рус, Омск, 2011, 40 с.

3. Քննադատական-համեմատական — գիտական մեկնաբանությունների համադրում և հետազոտական եզրահանգումների սահմանների որոշում,
4. Հավաստող (վերիֆիկացնող) — մեկնաբանական արդյունքների վավերացում՝ հեղինակավոր հետազոտությունների հետ համադրման միջոցով:

Ատենախոսության մեջ գրականության և աղբյուրների ներգրավումը նպատակաուղղված է, հիմնավորված և խստորեն հարաբերակցված հետազոտության առարկային՝ ապահովելով հայկական սկզբնաղբյուրների պատշաճ վերլուծությունը և քրիստոնեական ավանդույթում ժամանակի ընկալման մոդելների վերակառուցումը:

Ատենախոսության փորձաքննությունը: Թեկնածուական ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի գիտական խորհրդում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի աստվածաբանության և Հայ եկեղեցու պատմության ամբիոնի նիստում: Թեկնածուական ատենախոսության գլխավոր (Բարձրագույն կրթական և գիտության կոմիտե) կողմից երաշխավորված ամսագրերում հրատարակված վեց հոդվածներում:

Հետազոտության մեթոդաբանությունը: Աշխատության մեթոդաբանությունը հիմնված է փիլիսոփայական, կրոնական և միջառարկայական մեթոդաբանական համալիրների վրա: Հիմնական գործածվող մեթոդը պատմափիլիսոփայական մոտեցումը, արժեքաբանական, ֆենոմենոլոգիական եղանակը, ինչպես նաև՝ հերմենևտիկական վերլուծությունն է, ըստ Հ. Գ. Գադամերի, Պ. Ռիկյորի և Ջ. Ագամբենի մեթոդների, որոնք կիրառելի են դարձել ոչ միայն Սուրբ Գրքի, այլև մարդկության ողջ փիլիսոփայական և գրական ժառանգության հետազոտության համար:

Ատենախոսության տեսական և գործնական արժեքը: Ուսումնասիրության գործնական նշանակությունն այն է, որ ատենախոսության

նյութը հնարավոր է օգտագործել ինչպես ընդհանուր պատմափիլիսոփայական դասընթացներում, այնպես էլ ժամանակի ընկալման արդի փիլիսոփայական, աստվածաբանական և սոցիալական խնդիրներին նվիրված հատուկ դասընթացներում: Բնագրերի տեքստերի ուսումնասիրությունը կարող է նյութ դառնալ միջնադարյան հայ փիլիսոփայությանը նվիրված աշխատությունների և հատուկ դասընթացների համար: Ինչ վերաբերում է աշխատության գիտական արժեքին, ապա այն ներդրում է հայագիտության ընդհանուր ժառանգության մեջ: Այս աշխատանքում օգտագործված տեսական եզրակացությունները, հետազոտության առաջարկվող սկզբունքները և մեթոդները կարող են կիրառվել նմանատիպ թեմաներով հետագա աշխատանքների ժամանակ:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 181 էջ:

“Ներածության” բաժնում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, վերհանված են ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, ներկայացված է կատարված աշխատանքի կիրառական նշանակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության վերլուծությունը, ինչպես նաև՝ ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է “Պատմական ժամանակի հասկացության ծագումը և զարգացումը” և բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ “Ժամանակավարության մոդելները անտիկ շրջանում” քննվում են անտիկ փիլիսոփայության մեջ ժամանակի ընկալման հիմնական մոդելները: Վերլուծությունն սկսվում է Էլեացի փիլիսոփաներից (Պարմենիդես, Զենոն Ելեացի և Մելիսոսցի), որի շրջանակներում ժամանակն իմաստավորվում է կեցության կարգի միջոցով և փաստացիորեն զրկվում

գոյաբանական ինքնուրույնությունից: Այնուհետև հետազոտվում է ժամանակի պլատոնյան հայեցակարգը՝ որպես տիեզերական կարգին հարաբերակցված «հավերժության շարժմանն պատկեր», ինչպես նաև ժամանակի արիստոտելյան ընկալումը՝ որպես շարժման չափ՝ կապված փոփոխության և թվի հետ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Պլոտինոսի նորպլատոնականությանը, որտեղ ժամանակը մեկնաբանվում է որպես հոգու շարժումից ածանցված երևույթ և հակադրվում է Միակի ու Բանի վերժամանակային ոլորտին: Հավելյալ կերպով ենթագլխում համառոտ ներկայացվում են ժամանակի մասին պատկերացումները եգիպտական և շումերական առասպելաբանական ավանդույթներում, որտեղ ժամանակը խարսխված է առավելապես փուլային և սրբազան կարգերի վրա, ինչը թույլ է տալիս ուրվագծել անտիկ փիլիսոփայական մտքի առավել լայն մշակութային համապատկերը:

Երկրորդ ենթագլխում “Ժամանակավարություն մոդելները հուդայականության մեջ” վերլուծվում է ժամանակի ընկալումը հրեական (հուդայական) ավանդույթում, որի շրջանակներում ձևավորվում է ժամանակի՝ որպես պատմական և ուղղորդված գործընթացի պատկերացումը: Թորայի բնագրերի հիման վրա քննվում է ժամանակի ընկալումը որպես իրադարձությունների հաջորդականություն՝ կապված պատմության մեջ աստվածային ներգործության հետ: Մարգարեական գրականությունը վերլուծվում է որպես խոստման և իրականացման հեռանկարում ժամանակի իմաստավորման տիրույթ, որտեղ ներկան հարաբերակցվում է ապագայի հետ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Երկրորդ տաճարի ժամանակաշրջանի հայտնութենական գրականությանը, որտեղ պատմական ժամանակը ձեռք է բերում արտահայտված վախճանաբանական չափում և կառույցի հանգամանք է ստանում պատմության ավարտի սպասումով: Ցույց է տրվում, որ հենց հուդայականության մեջ է ձևավորվում գծային,

իմաստավորված պատմական ժամանակի մոդելը, որը վճռորոշ ազդեցություն է ունեցել քրիստոնեական աշխարհընկալման վրա:

Երրորդ ենթագլխում “Ժամանակավարության մոդելները եկեղեցու հայրերի ժարանգության մեջ” քննվում է ժամանակի իմաստավորումը վաղքրիստոնեական ավանդույթում, Կապադովկյան հայրերի և Օգոստինոս Երանելու երկերի հիման վրա: Վերլուծվում է Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու և Գրիգոր Աստվածաբանի ավանդը ժամանակի, արարչագործության և հավերժության փոխհարաբերության քրիստոնեական ընկալման ձևավորման գործում, ինչպես նաև՝ ժամանակի նրանց մեկնաբանությունը պատմության աստվածաբանության և փրկության տնօրինության համատեքստում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Օգոստինոս Երանելու ժամանակի հայեցակարգին, որտեղ ժամանակն իմաստավորվում է որպես մարդկային գիտակցության ու հիշողության ներքին կառուցվածք՝ հարաբերակցված Աստծո հավերժության հետ: Ցույց է տրվում, որ վաղքրիստոնեական մտքում տեղի է ունենում անտիկ փիլիսոփայական կարգերի և պատմության աստվածաշնչյան ընկալման համադրում (սինթեզ), ինչի արդյունքում ձևավորվում է ժամանակի աստվածաբանական մոդելը, որն էլ հիմք է դարձել քրիստոնեական ավանդույթի հետագա զարգացման համար:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** վերնագրված է “Պատմական ժամանակի հասկացության վերլուծությունը V – VII դարերի հայ մատենագրության մեջ”, և բաղկացած է չորս նթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ “Ժամանակի գծային ընկալման ձևավորումը V դարում” ՝քննվում են գծային պատմական ժամանակի ձևավորումը 5-րդ դարի հայ քրիստոնեական ավանդույթում: Վաղ պատմագրական և աստվածաբանական բնագրերի հիման վրա ցույց է տրվում, որ ժամանակի իմաստավորումը կառուցվում է առասպելա-պատմական սկզբնավորումից, այն է՝ Հայկ նահապետի կերպարից դեպի փրկության պատմության քրիստոնեական մոդելը: Մատնանշվում է ժողովրդական ավանդույթի տարրերի

դերը պատմական հիշողության կազմավորման և ուղղորդված ու իմաստակիր ժամանակի մասին պատկերացումների ամրապնդման գործում, ինչն էլ կանխորոշել է հայ հոգևոր մշակույթի զարգացումը:

Երկրորդ ենթագլխում ՝“ Մովսես Խորենացի” ՝ցույց է տրվում, որ Խորենացու մոտ անցյալը հանդես է գալիս ոչ թե որպես իրադարձությունների պարզ արձանագրում, այլ որպես պատմական պատումի (նարատիվի) կազմավորման տարր՝ ներառված գծային ժամանակի քրիստոնեական մոդելում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում առասպելա-տոհմաբանական սկզբնավորման՝ Հայկի կերպարի որպես վեր հառնող սկզբի և աստվածաշնչյան ու համաշխարհային-պատմական հեռանկարի զուգորդմանը, ինչը հեղինակին թույլ է տալիս կառուցել հայ ժողովրդի անընդհատական ու իմաստավորված պատմությունը: Եզրակացություն է արվում այն մասին, որ Խորենացու մոտ անցյալն իրականացնում է պատմական ինքնության հիմնավորման գործառույթ և ծառայում որպես սրբազան ու պատմական ժամանակների հարաբերակցման հանգուցակետ:

Երրորդ ենթագլխում՝ “Անանիա Շիրակացի”՝ վերլուծվում է Անանիա Շիրակացու ժամանակի ընկալումը, որը, մեկնաբանելով անտիկ փիլիսոփաներին, միաժամանակ քննադատության սլաքն ուղղում է քաղդեական աստղագուշակական ավանդույթի դեմ՝ մերժելով «ներկայի փակ ակնթարթի» գաղափարը: Ցույց է տրվում, որ նրա հայեցակարգում ժամանակն իմաստավորվում է որպես ուղղորդված գործընթաց, որը ծավալվում է աստվածային նախախնամության շրջանակներում, ինչի շնորհիվ ձևավորվում է մարդու կյանքի ուղու ամբողջական ընկալումը:

Չորրորդ ենթագլխում՝ “Հովհան Մայրագոմեցի”՝ իրականացվում է Մայրագոմեցու երկերի և Դ. Բոյարինի կողմից նկարագրված Դանիելի մարգարեության մեկնաբանման հրեական ավանդույթի հերմենևտիկական համեմատություն: Զուգադրվում են Դանիելի մարգարեության մեջ առկա «երկու

գահերի»՝ Հինավուրցի և երկրորդ գահի ընկալումները Մայրագոմեցու՝ հայ ավանդույթում ներկայացված համանման հայեցակարգի հետ:

Ատենախոսության երրորդ ***գլուխը*** վերնագրված է “Պատմական ժամանակի հասկացության վերլուծությունը VIII – XI դարերի հայ մատենագրության մեջ” և բաղկացած է հինգ ենթագլուխներից

Առաջին ենթագլխում՝ “Ստեփանոս Սյունեցի” ժամանակի ընկալումը Ստեփանոս Սյունեցու մոտ բացահայտվում է կրկնակի բանալիով: Մի կողմից, սա պատմության ժամանակն է՝ Հուդայից մինչև Քրիստոս սերունդների հաջորդականությունը՝ իր բոլոր հակասություններով և ողբերգությամբ: Մյուս կողմից, սա Լոգոսի հավերժությունն է, որը գոյություն ունի ժամանակից դուրս, բայց միավորվում է դրա հետ փրկության համար: Ժամանակավորի և անժամանակի այս կապի մեջ, ինչպես ցույց է տալիս Ստեփանոս Սյունեցին, թաքնված է մարմնացման առեղծվածը:

Երկրորդ ենթագլխում՝ “Հովհան Օձնեցի”՝ վերլուծվում է Օձնեցու ժամանակի ընկալումը և վերլուծվում են շարականների կառուցվածքը՝ դրանց ռիթմը, ծիսական փուլը և օրերի խորհրդանշականությունը, այնպես էլ աստվածաբանական միտքը, որտեղ ժամանակը ընկալվում է որպես արարչագործությունից դեպի հավերժություն շարժում: Երկու մակարդակներն էլ՝ բանաստեղծական և դավանական, բացահայտում են հայկական ավանդույթում ժամանակի քրիստոնեական ընկալման ամբողջական պատկերը:

Երրորդ ենթագլխում՝ “Խոսրովիկ Թարգմանիչ”՝ Խոսրովիկի ընկալմամբ ժամանակը դառնում է ամենակարևոր աստվածաբանական կարգույթը: Այն օգնում է հասկանալ, թե ինչպես է հավերժական Լոգոսը, մնալով անփոփոխ Իր աստվածային էության մեջ, մտնում պատմական իրադարձությունների ընթացքի մեջ և դառնում ժամանակի մասնակից՝ մնալով նույն Աստծո Որդին:

Չորրորդ ենթագլխում՝ “Համամ Արևելցի”՝աշխատության մեջ ներկայացված են Բանի նախահավերժության վերաբերյալ հեղինակի

մտորումները. դրանք բխում են արիոսականների դեմ մղվող դավանաբանական բանավեճից և շոշափում ժամանակի ու աստվածային էության փոխհարաբերության խնդիրը: Պաշտպանելով Որդու հավերժությունը՝ նա ընդգծում է, որ ժամանակը բացարձակ կարգույթ չէ, այլ արարչագործության հետ համատեղ առաջացած արարածային չափայնություն: Համամ Արևելցու այս դիտարկումները որոշակիորեն համահունչ են Հանս-Գեորգ Գադամերի կողմից մշակված հերմենևտիկ մեթոդաբանությանը, որը ժամանակակից գիտական ավանդույթում ճանաչվում է որպես հումանիտար վերլուծության հիմնարար եղանակներից մեկը:

Հինգերորդ ենթագլխում՝ “Խոսրով Անձևացի և Անանիա Նարեկացի”՝ ժամանակը վերլուծվում է ծիսական համատեքստում: Եթե վաղ միջնադարյան հայ մտքի նախկին վերլուծությունները ավելի հաճախ հիմնված էին փիլիսոփայական կարգույթների վրա (գծայնություն, կրկնություն, պատմական հիշողություն), ապա այստեղ ակնհայտ է դառնում այլ, աստվածաբանական տեսակետ: Պատարագում, ըստ Խոսրովի, ժամանակը պարզապես առաջ չի շարժվում, այլ բացահայտվում է որպես անժամանակի ներկայություն: Խոսրով Անձևացուց հետո ժամանակի ծիսական-խորհրդաբանական այս ընկալումը Նարեկյան դպրոցի ավանդույթում ստանում է նոր զարգացում՝ արտաքին-արարողակարգային հարթությունից տեղափոխվելով ներհայեցողական ու հոգևոր տիրույթ, որտեղ ընկալման առանցքը դառնում է մարդու ներքին հոգևոր փորձառությունը:

Ատենախոսության ***չորրորդ գլուխը*** վերնագրված է “Ժամանակի ընկալումը XII-XV դարերի հայ եկեղեցական մատենագրության մեջ”, և բաղկացած է վեց ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ “Ժամանակի ընկալումը XII – XV դարերում” վերլուծվում է հայ եկեղեցական մատենագրության մեջ ժամանակի հայեցակարգային ձևավորումը, որն ընթացել է անտիկ փիլիսոփայական հարացույցների և քրիստոնեական ավանդույթների համադրությամբ՝ սերտորեն

առնչվելով ծիսական պրակտիկային ու տոմարական համակարգին:Այս համատեքստում հայկական տոմարը դիտարկվում է ոչ թե սոսկ որպես մեխանիկական հաշվարկի գործիք, այլ որպես հավերժության և պատմության փոխկապակցվածությունն արտահայտող փիլիսոփայական-աստվածաբանական կարգույթ: Տոմարական ժամանակի հոսքը ներկայացվում է փուլայնության ու գծայնության սկզբունքների միասնությամբ, ինչը թույլ է տալիս սրբազան պատմության իրադարձությունները վերապրել ներկայի հարթությունում: Մատենագրական երկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակի ընկալման առանցքը փոխակերպվում է արտաքին-արարողակարգային ձևերից դեպի վախճանաբանական սպասում և մարդու ներքին հոգևոր-ներհայեցողական փորձառություն: Առանձնակի արժևորվում է հայկական ժամանակագրության այն ինքնատիպ հայեցակարգը, համաձայն որի՝ աշխարհընկալումը կողմնորոշված է դեպի անցյալն ու հավերժականը, որտեղ անցյալը խորհրդաբանորեն գտնվում է մարդու առջևում, իսկ ապագան՝ հետևում:

Երկրորդ ենթագլխում՝ “Ներսես Շնորհալի” վերլուծվում է Ներսես Շնորհալու շարականը և, նշվում, որ Ներսես Շնորհալու համար ժամանակի ընկալումը անբաժանելիորեն կապված է աստվածաբանական մարդաբանության և քրիստոնեական ինքնության պահպանման հովվական խնդրի հետ:

Երրորդ ենթագլուխը՝ “Վարդան Արևելցի”՝պարունակում է կարևոր փիլիսոփայական գաղափար, որտեղ ժամանակը պարզապես գծային հոսք չէ, այլ ներկայացնում է փակ փուլ, որը արտացոլում է տիեզերական ռիթմեր և կրկնվող գործընթացներ: Միաժամանակ, Վարդան Արևելցին ներկայացնում է արարչագործության ex nihilo կարգույթը՝ ընդգծելով, որ նյութական գոյությունը ծագում է լիակատար անգոյությունից՝ Աստծո ազատ և հզոր կամքով:

Չորրորդ ենթագլխում՝ “Հովհանես Երզնկացի”՝ ներկայացված է Երզնկացու փորձը՝ ժամանակը հասկանալ քերականության միջոցով: Սա ցույց է

տալիս, որ Երզնկացու համար քերականությունը ոչ միայն խոսքի գործիք է, այլև ժամանակի կառուցվածքը նրա աստվածաբանական չափման մեջ տեսնելու միջոց:Այս մոտեցումը ցույց է տալիս Երզնկացու նորարարությունը:

Հինգերորդ ենթագլխում՝ “Գրիգոր Տաթևացի”՝ ժամանակի ընկալումը վերլուծվում է Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» կրոնափիլիսոփայական աշխատության մեջ: Գրիգոր Տաթևացու ժամանակի հայեցակարգը ձևավորվել է անտիկ փիլիսոփաների, մասնավորապես՝ Արիստոտելի ազդեցությամբ: Ինչպես և ողջ միջնադարյան փիլիսոփայությունը և արևելաքրիստոնեական ավանդույթը, ժառանգելով անտիկ դարաշրջանի, նորպլատոնականության և հայրաբանական գրականության գաղափարները, մեծ գիտնականն ու աստվածաբանն բացատրության և մեկնաբանության միջոցով կարողացավ անտիկ ժառանգությունը փոխներհյուսել ժամանակի և հավերժության քրիստոնեական ըմբռնման հետ:

Վեցերորդ ենթագլխում՝ “Ժամանակի ընկալումը Հայ եկեղեցու ծիսական ավանդույթում”՝ քննվում է ժամանակի ընկալումը հայոց ծիսական ավանդույթում, որը ձևավորվել է քրիստոնեական պաշտամունքի համատեքստում: Ծիսական բնագրերի վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել սրբազան ժամանակի յուրօրինակ մի մոդել, որտեղ համադրվում են աստվածաշնչյան ժառանգության տարրերը և անտիկ փիլիսոփայությունից սերող հայեցակարգային պատկերացումները: Մատնանշվում է ժամանակի հրեական ընկալման ազդեցությունը՝ որպես ծիսակարգում արդիականացվող սրբազան իրադարձությունների հաջորդականություն, ինչպես նաև անտիկ պատկերացումների դերը ժամանակի և հավերժության փոխհարաբերության վերաբերյալ: Արդի գիտական հետազոտությունների ներգրավումը հիմնավորվում է այն փաստով, որ ժամանակակից հասարակական գիտության մեջ ծիսական բնագրերը դիտարկվում են որպես պատմափիլիսոփայական ու աստվածաբանական վերլուծության լիարժեք առարկա, ինչը թույլ է տալիս

հավուր պատշաճի հետազոտել դրանց ժամանակային կառուցվածքը՝ դուրս չգալով ատենախոսության առարկայի շրջանակներից:

“**Եզրակացությունների**” բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները՝

1. Դիտարկվել է ժամանակի ընկալման պատմական և փիլիսոփայական համատեքստը հնում: Հին հասկացությունների վերլուծությունը թույլ է տվել մեզ բացահայտել ժամանակի մասին սկզբնական պատկերացումները որպես փուլային և գծային գործընթաց, որը ծառայել է որպես տեսական հիմք հետագա կրոնական ըմբռնման համար:

. Դասական հունական և առասպելական աշխարհայացքում տիեզերքն ընկալվում է որպես ինքնաբավ, նյութական-զգայական ամբողջություն, որը զուրկ է արտաքին գիտակից արարչից և գծային պատմականությունից: Այս համակարգում գոյության հիմնասյունը «հավերժական վերադարձի» սկզբունքն է, որտեղ ժամանակը դիտարկվում է որպես անվերջ շրջապտույտ:

Ըստ այդմ՝ ցանկացած փոփոխություն կամ մահ ոչ թե վերջնական կորուստ է, այլ նախնական վիճակին վերադառնալու և վերածնվելու անհրաժեշտ փուլ: Արխետիպային գործողությունների պարբերական կրկնությամբ անտիկ մարդը չեղարկում էր ժամանակի անշրջելիությունը՝ բավարարելով իր գոյաբանական կայունության և հավերժական «լինելության» ձգտումը:

2. Հատուկ ուշադրություն դարձվեց հուդայականությանը, որտեղ ժամանակի ընկալումը ձեռք է բերում սրբազան չափում: Ի տարբերություն ժամանակի դիցաբանական ընկալման, որտեղ այն զուրկ է երկու հիմնական եղանակից՝ անցյալից և ապագայից, և օգտագործվում էր միայն «ներկայի» եղանակը, հուդայականությունը

մարդկության պատմության մեջ ներմուծեց գծային, պատմական ժամանակի հասկացությունը:

.Հուդայականության մեջ ժամանակն ընկալվում է որպես գծային պատմականություն, որը խարսխված է միաստվածության և աստվածային ուխտի վրա: Ի տարբերություն անտիկ շրջապտույտի, այստեղ ժամանակն ունի հստակ ուղղվածություն (վեկտոր)՝ ընթանալով դեպի վերջնական վախճանաբանական հանգուցալուծում և պատմության աստվածապետական նորացում:

2. Ուսումնասիրվել է ժամանակի ըմբռնումը Եկեղեցու Սուրբ Հայրերի կողմից, ովքեր ժամանակը հասկանում էին ոչ թե պարզապես որպես իրադարձությունների գծային հոսք, այլ որպես հոգևոր կարգույթ, որը սերտորեն կապված է Աստվածային Նախախնամության և փրկարար պատմության հետ:

.Քրիստոնեության մեջ գերիշխում է ժամանակի գծային-նպատակաբանական մոդելը՝ ուղղորդված աստվածային նախախնամությամբ: Այն դիտարկվում է որպես փրկաբանական գործընթաց, որտեղ Քրիստոսի մարմնավորումն ընկալվում է որպես պատմության վճռորոշ առանցք. դրանով սկիզբ է դրվում «վերջին ժամանակներին»՝ միտված թե՛ անհատական, թե՛ տիեզերական վախճանաբանական հանգուցալուծմանը:

3. Մենք վերլուծեցինք Եզնիկ Կողբացու և Եղիշեի հասկացությունները և եկանք այն եզրակացության, որ երկու հեղինակներն էլ առաջարկում են ժամանակի աստվածաբանական ըմբռնում արևելյան քրիստոնեական ավանդույթի շրջանակներում: Կողբացին արարչագործությունը դիտարկում է որպես աշխարհի ստեղծում ոչնչից՝ ընդգծելով Աստծո գերակայությունը և ժամանակի երկակի բնույթը՝ տիեզերքի սկիզբը և անընդհատ արարչագործությունը: Եղիշեն Հոր հավերժությունը հասկանում է որպես Աստվածային Անձերի անժամանակ միասնություն,

որտեղ կարևոր է հարաբերությունների կարգը, այլ ոչ թե ժամանակագրությունը: Միասին նրանց տեսակետները կազմում են ժամանակի բարդ ըմբռնում՝ որպես պատմական և բնազանցական երևույթ:

4. Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության նախաբանը վերլուծելիս ժամանակային իմաստները ներկայացված են շատ ավելի գաղտնի և պահանջում են հատուկ հերմենևտիկ մոտեցում: Այս ընտրությունը պայմանավորված է հետազոտական խնդիրը բարդացնելու և ցույց տալու մտադրությամբ, թե ինչպես կարելի է հերմենևտիկ մեթոդը արդյունավետ կիրառել այն տեքստերի վրա, որոնք չեն պարունակում անմիջական փիլիսոփայական մտորումներ, բայց հագեցած են իմաստային բազմաշերտությամբ:

5. Վերլուծելով Շիրակացու փիլիսոփայական և աստվածաբանական հայացքները՝ եկանք հետևյալ եզրակացության, որ գիտնականի աշխատություններում ժամանակի ընկալման փիլիսոփայությունը չի դիտարկվել որպես առանձին գիտություն, հետևաբար թույլ է արտահայտված: Դա բացատրվում է դասական անտիկ փիլիսոփայության ազդեցությամբ, որը երբեք չի դիտարկել ժամանակը փուլից մեկուսացված և ֆիզիկայի մեջ չի դիտարկվել որպես միավոր: Վաղ միջնադարյան հայ միտքը քննելիս պետք է հասկանանք, որ եթե ժամանակը որևէ կերպ հայեցակարգված էր, ապա դա միայն կրոնի հետ միասնության մեջ էր, հետևաբար դա չպետք է դիտարկել որպես ժամանակի հերմենևտիկայի նկատմամբ ինչ-որ անուշադրություն:

.Վերլուծելով Մայրագոմեցու՝ ժամանակի և հավիտենության հարաբերակցության ընկալումը, կարելի է փաստել, որ նրա աստվածաբանության մեջ հաղթահարվում է պատմական ժամանակի գծային սահմանափակվածությունը: Եկեղեցական խորհրդի շրջանակներում ժամանակը վերածվում է «հանդիպման տիրույթի»,

որտեղ երկրային ակնթարթը, հագենալով աստվածային ներկայությամբ, ձեռք է բերում գոյաբանական նոր որակ և հաղորդակից դառնում հավիտենականությանը:

6. Եթե նախորդ դարերում՝ հատկապես V - VII դարերում, ժամանակի հասկացությունը դեռևս պահպանում էր անտիկ աշխարհայացքի կառուցվածքային առանձնահատկությունները՝ որպես աստվածային նախախնամությանը ենթարկվող ստեղծված, ուղղորդված և վերահսկվող իրադարձությունների ընթացք, ապա 8-10-րդ դարերի քրիստոնեական հեղինակների աշխատություններում այս ըմբռնումը նահանջում է այլ շեշտադրման առջև՝ ժամանակը որպես հոգու ներքին շարժում դեպի Աստված: Հենց այս ժամանակահատվածում Արևելյան քրիստոնեական միստիցիզմի, այդ թվում՝ նորպլատոնական տարրերի ազդեցության տակ սկսեց ավելի ու ավելի հստակորեն ի հայտ գալ թեոզիսի (աստվածացման,) գաղափարը:

. Ստեփանոս Սյունեցու համար (ինչպես ամբողջ արևելյան քրիստոնեական ավանդույթի մեջ) փուլը պարզապես բնության դիտարկում չէ, այլ Նախախնամության ցուցիչ. ժամանակը փուլային է ոչ թե այն պատճառով, որ կրկնվում է, այլ որովհետև պահպանում է Աստծո կողմից դրան տրված իմաստը: Ժամանակի փուլային կառուցվածքը Սյունեցու ժամանակաշրջանում դառնում է փոփոխության մեջ անփոփոխության պատկերակ, օրերի հոսքի մեջ փայլող Աստվածային կարգի նշան:

. Հովհաննես Օձնեցու աշխատություններում պարունակվում է աստվածաբանական խորհրդածություն, որում հստակորեն ուրվագծվում են քրիստոնեական ավանդույթին բնորոշ ժամանակի հիմնական կարգույթները՝ փուլային, գծային ու վախճանաբանական:

.Խոսրովիկ Թարգմանչի մոտ ժամանակը հանդես է գալիս ոչ թե որպես վերացական փիլիսոփայական հասկացություն, այլ որպես

կոնկրետ սահման, որը բաժանում է Որդու անսկզբնական ծնունդը աստվածայինից, Նրա մարմնով ծնունդից:

. Համամ Արևելցու մտորումները Բանի նախահավերժության մասին անցնում են արիոսականների հետ վեճից և շոշափում են ժամանակի և աստվածային էության միջև եղած փոխհարաբերության հարցը: Պաշտպանելով Որդու հավերժությունը՝ նա ընդգծում է, որ ժամանակը բացարձակ կարգույթ չէ, այլ արարչագործության հետ միասին առաջացած արարչագործության չափանիշ:

7. IX - X դարերում աստվածացման թեման ամուր կերպով ամրապնդվեց հայ փիլիսոփայական մտքում, ինչը հստակորեն երևում է Խոսրով Անձևացու մոտ: Անձևացու կարծիքով ժամանակը գծային գործընթաց չէ, այլ բացահայտվում է որպես անժամանակ ներկայություն: Այս համատեքստում Քրիստոսը չի գործում անցյալի սահմանափակ պատմական պահի մեջ, այլ անընդհատ ներկա է՝ այստեղ և հիմա, ինչը ընդգծում է Աստվածային ներկայության շարունակականությունը:

8. Սկսած XI դարից՝ վերստին արթնացավ հետաքրքրությունը անտիկ փիլիսոփայական և գիտական ժառանգության նկատմամբ:

.Ներսես Շնորհալու երկերում կարելի է տարբերակել ժամանակի ընկալման երկու փոխլրացնող կողմեր՝ տրանսցենդենտալ և իմմանենտ:

.Վարդան Արևելցու ընկալմամբ ժամանակը չունի ինքնուրույն գոյություն, այլ գոյություն ունի որպես արարչագործության գոյության հետ կապված ածանցյալ երևույթ:

.Երզնկացու երկերում մենք հայտնաբերել ենք ժամանակի մի հասկացություն, որը նորարարական էր միջնադարի համար, որտեղ քերականությունը հանդես է գալիս ոչ միայն որպես խոսքի միջոց, այլև որպես ժամանակը հասկանալու միջոց՝ իր աստվածաբանական և գոյաբանական չափումներով: Երզնկացին համատեղում է ժամանակի

գոյաբանությունը որպես կեցության և չկեցության միջև սահման, հին բնական փիլիսոփայության քննադատական վերանայում քրիստոնեական աստվածաբանության հետ և ժամանակի փիլիսոփայական վերլուծություն լեզվական ձևերի միջոցով: Այս գաղափարները նախանշում են Եվրոպական Նոր Դարի նմանատիպ հասկացություններ:

.Գր. Տաթևացու՝ ժամանակի հայեցակարգը ձևավորվել է անտիկփիլիսոփաների, մասնավորապես՝ Արիստոտելի ազդեցությամբ: Լինելով ուշմիջնադարյան փիլիսոփա՝ նա բացահայտել է տիեզերքի բարդ, նվիրապետական համակարգը՝ դրանով իսկ ժամանակի և հավերժության հասկացություններին տալով արժեքաբանական կողմնորոշում, մասնավորապես բարդացնելով հավերժության մասին պատկերացումները՝ բաժանելով այն չորս ստորոգույթների:

. Մենք ցույց ենք տվել, որ պատարագային տեքստերը կարող են դիտարկվել որպես լիարժեք մատենագրական նյութ՝ ժամանակի ընկալումը բնազանցական մեթոդով ուսումնասիրելու համար:

Այս ուսումնասիրության շրջանակներում ներկայացված հայ փիլիսոփայական և աստվածաբանական մտքի աշխարհայացքի հետազոտումը ժամանակի ընկալման հարցում առաջին համակարգված փորձն է, որը նոր հնարավորություններ է բացում այս թեմայի շուրջ գիտական քննարկման համար: Աշխատանքի հիմնական նպատակն է հետազոտողների ուշադրությունը հրավիրել հայկական ավանդույթում ժամանակի ընկալման խնդրին, որը ներկայումս մնում է ոչ բավարար ուսումնասիրված:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Ժամանակի ընկալումը Անանիա Շիրակացու աշխատություններում, Պատմաբանասիրական հանդես, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, 2024 N 3 210- 221 էջ:
2. Пролог Истории Армении как граница времени: герменевтическое чтение Мовсеса Хоренаци, Регион и мир, 2025, № 3 (58), 156 – 161 էջ:
3. Ժամանակի եվ հավերժության կարգույթները Ս. Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» աշխաբության մեջ, Հայագիտաան հանդես, Խաչատուր Աբովյանի ամվան Հայկական պետական մանկավարժական համալսարան 2025, N 1 (68) , 211-225 էջ:
4. Perception of time in the Eicharistic canon of the Armenian Apostolic Charch, Fundamental armenology, ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, 2024, N 2 (20), 115- 124 էջ:
5. Ժամանակի ընկալումը Ը-Ժ դարերի հայ եկեղեցական մատենագրության մեջ, «Էջմիածին» ամսագիր, (Ժ), 2025, 5-16 էջ:
6. Осмысление категорий времени в ранней Церкви, «Էջմիածին» ամսագիր, (Հավելված), 2025, 5-18 էջ:

Ширинян Арусяк Алешевна

«Восприятие исторического времени в армянской церковной письменности (V–XV вв.)»

(Религиоведческий анализ)

Резюме

Специальность: 00.05 — Теория и история религии (исторические науки)

Общая характеристика работы:

Данная работа представляет собой комплексное исследование концепции времени как фундаментальной философско-антропологической и теологической категории в армянской интеллектуальной традиции Средневековья. Исследование охватывает период от формирования армянского алфавита и «Золотого века» (V в.) до позднего средневековья (XV в.), когда богословская мысль достигла своей систематической зрелости в трудах Татевской школы.

Актуальность и научный контекст:

Актуальность темы обусловлена необходимостью переосмысления того, как древние культуры конструировали понятие «истории». В отличие от современных линейно-прогрессистских моделей, средневековое восприятие времени в Армении представляло собой сложный синтез литургического повторения, исторической памяти и эсхатологического ожидания. Особое внимание в работе уделяется параллелям между средневековой мыслью и современной философией (в частности, идеями Джорджо Агамбена). Понятие «времени, которое остается» (кайрос), развиваемое Агамбеном, находит глубокие отзвуки в армянской экзегетике, где историческое событие рассматривается не просто как факт прошлого, а как актуальное соприкосновение с вечностью.

Цель и задачи исследования:

Цель работы — реконструировать целостную модель восприятия времени в армянской церковной литературе и выявить её уникальность в контексте мировой христианской мысли.

Основные задачи:

* Исследовать переход от античных циклическо-космологических представлений о времени к христианскому линейно-сотериологическому вектору.

* Раскрыть специфику армянской историографии как способа «освящения времени» через фиксацию Божественного присутствия в национальной истории.

* Проанализировать труды ключевых мыслителей (Езник Кохбаци, Анания Ширакаци, Ованес Ерзнкаци, Григор Татеваци) через призму их темпоральных концепций.

* Изучить связь между грамматическими формами (категориями времени в языке) и философским пониманием бытия.

Методология:

Методологическую базу исследования составляет сочетание классического историко-философского анализа с методами современной герменевтики (Х.-Г. Гадамер, П. Рикёр, Дж. Агамбен). Включение в теоретический аппарат идей Джорджо Агамбена позволило глубже интерпретировать эсхатологические аспекты текстов: время в армянской традиции рассматривается не как бесконечная хронология, а как сжатое, мессианское время, где «конец времен» уже таинственно присутствует в настоящем.

Основные положения и новизна:

1.Синтез традиций: Доказано, что армянская мысль творчески переработала наследие античности (Платон, Аристотель) и патристики, создав уникальную систему, где время понимается как «граница» между бытием и небытием.

2.Лингво-философский аспект: В работе впервые подробно анализируется наследие Ованеса Ерзнкаци, который рассматривал грамматику как инструмент

познания времени, предвосхищая некоторые идеи лингвистической философии Нового времени.

3.Эсхатологический реализм: На основе анализа трудов Григора Татеваци показано, как иерархическое устройство вселенной коррелирует с иерархией времени, где земная история является лишь отражением небесной вечности.

4.Время и Идентичность: Автор обосновывает тезис о том, что для армянских авторов фиксация истории была формой духовного сопротивления и сохранения национальной идентичности в условиях отсутствия политической стабильности.

Структура работы:

Диссертация (181 страниц) включает:

* Введение, где обосновывается выбор темы и теоретические рамки.

* Главы, посвященные генезису понятия: от библейских основ и влияния Каппадокийцев до формирования самобытной армянской школы.

* Аналитические разделы, посвященные конкретным авторам (V–VII вв., XIII–XV вв.), где прослеживается эволюция от космологии к сложной метафизике времени.

* Заключение, суммирующее вклад армянских средневековых авторов в общемировую философию истории.

Практическая значимость

Результаты исследования могут быть использованы в курсах по истории философии, теории религии, арменистике и культурологии. Работа открывает новые горизонты для диалога между средневековым наследием и современной политической теологией.

Shirinyan Arusyak Aleshovna

‘The Perception of Historical Time in Armenian Ecclesiastical Literature (5th–15th Centuries)
(Religious studies analysis)

Summary

Specialism: 00.05 — Theory and History of Religion (Historical Sciences)

General Description of the Work:

This thesis presents a comprehensive study of the concept of time as a fundamental philosophical-anthropological and theological category within the Armenian intellectual tradition of the Middle Ages. The research encompasses the period from the formation of the Armenian alphabet and the ‘Golden Age’ (5th century) to the Late Middle Ages (15th century), a time when theological thought reached systematic maturity in the works of the Tatev School.

Relevance and Scientific Context:

The relevance of this topic stems from the necessity to re-evaluate how ancient cultures constructed the concept of ‘history’. In contrast to modern linear-progressivist models, the medieval perception of time in Armenia represented a complex synthesis of liturgical recurrence, historical memory, and eschatological anticipation.

Special emphasis is placed on the parallels between medieval thought and contemporary philosophy (specifically, the ideas of Giorgio Agamben). The concept of ‘the time that remains’ (kairos), developed by Agamben, finds profound resonances in Armenian exegesis, where a historical event is viewed not merely as a past fact, but as a present encounter with eternity.

Aims and Objectives of the Research:

The aim of this work is to reconstruct a coherent model of the perception of time in Armenian ecclesiastical literature and to identify its uniqueness within the broader context of global Christian thought.

The primary objectives are as follows:

* To investigate the transition from Classical cyclical-cosmological notions of time to the Christian linear-soteriological vector.

* To elucidate the specificity of Armenian historiography as a means of 'sanctifying time' through the documentation of Divine presence within national history.

* To analyse the works of key thinkers (Yeznik Koghbatsi, Anania Shirakatsi, Hovhannes Yerznkatsi, Grigor Tatevatsi) through the prism of their temporal concepts.

* To examine the relationship between grammatical forms (linguistic temporal categories) and the philosophical understanding of being.

Methodology:

The methodological framework of this research comprises a combination of classical historical-philosophical analysis and the methods of contemporary hermeneutics (H.-G. Gadamer, P. Ricoeur). The incorporation of Giorgio Agamben's ideas into the theoretical apparatus has facilitated a deeper interpretation of the eschatological aspects of the texts: within the Armenian tradition, time is perceived not as an infinite chronology, but as a contracted, messianic time, wherein the 'end of times' is already mysteriously present in the here and now.

Key Findings and Originality:

1. Synthesis of Traditions: It is demonstrated that Armenian thought creatively synthesised the heritage of Antiquity (Plato, Aristotle) and Patristics, establishing a unique system where time is understood as a 'boundary' between being and non-being.

2. Linguo-Philosophical Aspect: The thesis provides the first detailed analysis of the legacy of Hovhannes Yerznkatsi, who regarded grammar as a tool for the cognition

of time, thereby prefiguring certain ideas found in the linguistic philosophy of the Modern era.

3. Eschatological Realism: Based on an analysis of the works of Grigor Tatevatsi, the research illustrates how the hierarchical structure of the universe correlates with the hierarchy of time, where earthly history serves merely as a reflection of celestial eternity.

4. Time and Identity: The author substantiates the thesis that, for Armenian authors, the documentation of history constituted a form of spiritual resistance and the preservation of national identity in the absence of political stability.

Structure of the Work:

The thesis (comprising 181 pages) consists of:

* An Introduction, which establishes the rationale for the chosen topic and defines the theoretical framework.

* Chapters dedicated to the genesis of the concept: from Biblical foundations and the influence of the Cappadocian Fathers to the formation of a distinctive Armenian school of thought.

* Analytical sections focused on specific authors (5th–7th and 13th–15th centuries), tracing the evolution from early cosmology to a sophisticated metaphysics of time.

* A Conclusion, which summarises the contribution of medieval Armenian authors to the global philosophy of history.

Practical Significance:

The findings of this research may be utilised in academic courses on the history of philosophy, the theory of religion, Armenian studies, and cultural studies. Furthermore, this work opens new horizons for dialogue between medieval heritage and contemporary political theology.